

հիտ իսթէմէմ քի ուիշվէթ իլէ թութուլայ, մուսին մուսլիման իսթէրիմ: Եւ բացեալ զդատաստանազիրքն մեծ որ առաջի նորա դնիւր, ասէ. Քիթապլէրըմըզ պոյլէ շահիտի գապուլ իթմէզ: Ելեալ արտաքս դաւաճանողն եւ կոչէ ի ներքս գայլ ոմն վկայ կացուցեալ յատենի եւ ի վկայելն այլաբանութեամբ իբրուանման միմեանց, պատասխանէ դատաւորն. Սէնի թէսքիէ իթուուքտէ շիրէթ վէ քեազիպ չըքարսէն՝ թազիր իտէրէմ, քիւրէկէ վերըրըմ, էչէկէ պինաըրըրըմ, սէնի սալպ իտէրըմ: Եւ հայեցեալ պնդագոյն յերեսս նորա՝ դարձուցանէ զբանսն եւ ասէ կակղաբար. Ահա՛ անդ յատենի այսպէս ասեն քեզ՝ մի՛ այլագուհնեսցիս, մի՛ դողասցիս սրտիւք եւ անձամբ, այլ համարձակ կանգնեսցիս եւ պիտէրվա տացես զպատասխանիդ. նախ խորհեա՛ց եւ եփեսցես զբանս վկայութեան քո եւ ապա հանցես ի բերանոյդ: Եւ այսպէս զօրհանապազ հրահանգեալ էզպէր ի բերանս վարժեցուցանէ զհետեւեալսն իւր որպէս զպղատոնականին իմն մարզարան, որպէսզի բազմախումբ քաղաքիս որոց եւ պիտոյասցի վկայս՝ ըստ զիպման երթեալ զըտանեն զնոսա եւ կաշառուք կալեալ մատուցանեն ի դաւաճանութիւնս իւրեանց ի զրպարտութիւն անիրաւութեանց, եւ կենցաղավարութիւնք նոցուն ի սոյն մակացութենէ բաւականացեալք ապրին, եւ ոչ պակասին թիւք աշակերտելոց նորա՝ փոխանորդեալ մինն զմիւսն ի ձեմարան նոյն հանձարոյ, յորոց պահպանեսցէ զմեզ անքուն ակն եւ աննինջն ամենայնի, ամէն:

ԺԱ. — Մաթոս ազան յոյժ երկուցեալ ի բարրանաց Ալի փաշային, քանզի զխանն Բիւթանիոյ կեօմըուկով խոստացեալ էր վէզիրին ընծայել, գոնեա ըզվճիւ հատուցանել քսան բիւր փողոյն որ ի Մաթոսէն, վասն որոյ յերկարեցին՝ պէս պէս բասրանօք ըզ-